

ԽԱԴ ՎՐԴ. ԱԶԱՊԱՀԵԱՆ, ՍՍԵՑԻ.—Մբ. Ստոյ վանքին. Ծ. 1883 ին. Զո. 1909 ին. 1915 ին Ստոյ Սահակ կթղ.ին հետ կ'ապաստանի Ս. Յակոբի վանքը. ՏՊ. (1916-1922). Առ. Հալէպի 1923 ին. այժմ կը գտնուի Սահակ կթղ.ի մօտ:

ԽԱԹՈՒՆ ՄՊ. ԲԵՐԻԱՅԻ.— Ի նպաստ Ս. Յակոբի վանքին, յիշատակ կը թողու Երուսաղէմի մէջ քառորդ մթերանոց մը:

ԽԱԹՈՒՆ ՄՊ. ՔԻՒՐՏԻՍՏԱՆՅԻ.— Կը վախճանի 1880 ին. ի նպաստ Ս. Յակոբի վանքին յիշատակ կը թողու խանութ մը Յոպպէի մէջ և երկաթուղիի քանի մը արժէթուղթեր:

ԽԱԶԱՏՈՒՐ ԱԲ.—Մբ. 1693 ին կը միտարանակցէր. 1694 ին Կ. Պոլիս գտնուիլը կը յիշատակուի Ամրեցիին Օրագրութեան մէջ:

ԽԱԶԱՏՈՒՐ ԵՊՍ. ՀԱԼԷՊՅԻ.—Մբ. Հայրը Սասուածաւոր եւ մայրը Շնոփոր. 1529 ին Ս. Յարութեան տաճարին կը նուիրէ ՊԳ (=1355) ին Հալէպի մէջ ընդօրինակուած աւետարան մը, որուն ստացողն էր Ասիւ և որ կը գրէ հետեւեալ յիշատակարանը. «Զվերջին ստացող սբ. աւետարանիս զՀալպցի տէր Սաչատուր եպկս. որ եղի սբ. աւետարանս ի Յարութիւն առ զբան սբ. Գերեզմանին Քր. ի սբ. Գողգոթա, յիշատակ ինձ և ծնողաց իմոց Մըզտեսի Մուշտկար Աստուածատուրին և մաւրն իմոյ Շնոփորին... թվ. ԶՀԸ.» (=1529) (ՊՁ. Թ. 59 և Խապ. Յուց. տետր, Ե. էջ 375): Անդրէաս պատրիարք Պոլիս ուղևորած ըլլալով՝ Սաչատուր եպս. որ արդէն 1524 էն սկսեալ փոխանորդ էր, Ս. Յակոբի վանքի գործերը կը վարէ: Դատարանի արտօնութեամբ կը ջանայ նորոգել Համբարձման եկեղեցիին գմբէթը. բայց տեղացիներէն կ'արգելուի. 1556 ին կրկին հրամանագիր ստանալով՝ կը լրացնէ նոյն եկեղեցիին նորոգութիւնները: 1584 ին Փիլիպպոս եպիսկոպոսին հետ կ'ուղևորի Պոլիս Ս. Աստուածածնի գերեզմանին վրայ պատարագելու իրաւունք ստանալու հա-